ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մայիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-111-18.04.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 559 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՊԻ-111-18.04.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) քննարկվող հոդվածներն առաջարկում է թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով ստորև ներկայացված դիտարկումները.

1) նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով առաջարկվում է ընդլայնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 332^3-րդ հոդվածի 1-ին մասի նորմի դիսպոզիցիայում սահմանված սուբյեկտների շրջանակը՝ պատասխանատվություն նախատեսելով ոչ միայն պաշտոնատար անձի (հատուկ սուբյեկտի), այլ նաև պաշտոնատար անձ չհանդիսացող սուբյեկտի (ընդհանուր սուբյեկտի) համար: Առաջարկությունը հիմնավորվում է նրանով, որ «(…) նորմի դիսպոզիցիայում նկարագրված արարքի կատարումը պաշտոնատար անձ չհանդիսացող անձի կողմից ևս հնարավոր է և ունի ոչ պակաս հանրային վտանգավորություն:»: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ պաշտոնատար անձ չհանդիսացող անձի (ընդհանուր սուբյեկտի) կողմից փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու դրսևորման տարբեր ձևերը (օրինակ, ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակումը, սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը և այլն) գործող քրեական օրենսգրքի 332^3-րդ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այլ հոդվածներով քրեականացված են:

Հարկ է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 332^5-րդ հոդվածում պատասխանատվություն է նախատեսված *նոտարի գործունեությանը միջամտելու համար,* և այս պարագայում ևս պարզ չէ, թե նախագծի ընդունման դեպքում ինչպես են միմյանցից սահմանազատվելու նոտարի լիազորությունների իրականացումը *խոչընդոտելու և գործունեությանը միջամտելու* հանցակազմերը: Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի մի շարք հոդվածների դիսպոզիցիաներում գործունեությանը միջամտելը դիտարկվում է որպես լիազորությունների իրականացումը խոչընդոտելու առանձին դրսևորում (օրինակ, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 332-րդ և 332.1-ին հոդվածներ).

2) նախագծի 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 332.3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «լիազորությունների» եզրույթը փոխարինել «գործունեության» եզրույթով, քանի որ վերջինս օգտագործվում է «Նոտարիատի մասին» և «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ «փաստաբանական գործունեություն» եզրույթը չափազանց լայն է. այն ներառում է նաև խորհրդատվություն՝ ներառյալ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը: Ինչ վերաբերում է «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, ապա այստեղ օրենսդիրն օգտագործում է ինչպես «լիազորություններ», այնպես էլ՝ «գործունեություն» հասկացությունները: Հետևաբար, ելնելով իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի ապահովման անհրաժեշտությունից, գտնում ենք, որ քրեական կառուցակարգերում առավել նպատակահարմար է գործածել «լիազորություններ» եզրույթը.

3) նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 332.3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման համար խստացնել քրեաիրավական նորմի սանկցիան՝ նախատեսելով ազատազրկման ձևով պատիժ՝ մեկից մինչև երեք տարի ժամկետով: Այդ առումով հայտնում ենք, որ ներկայումս պետության կողմից իրականացվող քրեական քաղաքականության հիմնական ուղղություններից է ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակների կիրառման շրջանակի ընդլայնումը և պատժի նպատակների իրականացման ապահովումը՝ ազատազրկման ձևով պատժի նվազագույն կիրառմամբ: Հետևաբար, կարծում ենք, որ քննարկվող արարքի համար ազատազրկման ձևով պատժատեսակի նախատեսումը նպատակահարմար չէ, ուստի, առաջարկվող փոփոխության անհրաժեշտությունը բացակայում է.

4) նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել փոփոխություններ, որոնք նպատակ են հետապնդում անձին քրեական պատասխանատվության ենթարկելու՝ այն դեպքերում, երբ նա դատավարության մասնակցին վիրավորել է ոչ միայն դատական նիստերի դահլիճում, այլ նաև ընդհանրապես՝ ելնելով դատավարական *կարգավիճակից*: Նախագծի հիմնավորման մեջ նշվում է. «Դիտարկելով դատավարության մասնակցին որպես արդարադատություն իրականացնող սուբյեկտի՝ առաջարկում ենք անմիջական

օբյեկտը՝ «դատական իշխանության հեղինակությունը», փոխարինել «արդարադատության նկատմամբ ոտնձգությամբ», սակայն ամրագրելով, որ անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե անձը դատավարության մասնակցին վիրավորել է՝ ելնելով դատավարական կարգավիճակից:»: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Այս սահմանադրական դրույթից բխում է, որ դատավարության մասնակիցները ոչ թե արդարադատություն իրականացնող սուբյեկտ են, այլ իրենց գործունեությամբ նպաստում են արդարադատության իրականացմանը: Եվ հենց դատական իշխանության հեղինակության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների կարևորությամբ է պայմանավորված օրենսդրի այն մոտեցումը, որ քաղաքացիաիրավական զանցանք հանդիսացող վիրավորանքը, որն ուղղված է դատավարության մասնակիցների դեմ, քրեաիրավական բնույթ է ստանում դատական նիստերի դահլիճում՝ դատական իշխանության կողմից իր հիմնական սահմանադրական գործառույթը՝ արդարադատությունն իրականացնելիս:

Ելնելով շարադրվածից՝ գտնում ենք, որ առաջարկվող օրենսդրական կարգավորման ընդունման դեպքում կխեղաթյուրվի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված քրեաիրավական նորմի էությունը, հետևաբար, նախագծի հեղինակի կողմից բարձրացված խնդիրը պետք է մնա քաղաքացիաիրավական կարգավորման տիրույթում: Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետությունում դատարանները կոչված են իրականացնելու արդարադատություն՝ ոչ միայն գործն ըստ էության քննելիս, այլ նաև մինչդատական վարույթում անձի իրավունքների և ազատությունների ապահովման նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, հետևաբար, փարատվում է նախագծի հեղինակի այն մտավախությունը, որ անձը կենթարկվի քաղաքացիաիրավական պատասխանատվության, եթե դատավարության մասնակցին վիրավորի մինչդատական վարույթում, օրինակ, խափանման միջոց կալանքի միջնորդության քննության ժամանակ:

20 մայիսի 2019 թվականի N 559 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-111-18.04.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մայիսի 20
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-111-18.04.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

1) Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (Համարը՝ ՀՕ-528-Ն), (այսուհետ՝ Օրենսգիրք) 332^3-րդ հոդվածի 1-ին մասում «Պաշտոնատար անձի կողմից փաստաբանի» բառերը փոխարինել «Փաստաբանի» բառով:

2) Նույն հոդվածի 1-ին մասում «լիազորությունների» բառը փոխարինել «գործունեության» բառով:

3) Նույն հոդվածի 2-րդ մասում «լիազորությունների» բառը փոխարինել «գործունեության» բառով:

4) Նույն հոդվածի 2-րդ մասը «ժամկետով» բառից հետո լրացնել հետևյալ բառերը՝ «, կամ ազատազրկմամբ մեկից երեք տարի ժամկետով»:

Հոդված 2.

1) Օրենսգրքի 343-րդ հոդվածի վերնագրում «Դատարանի» բառը փոխարինել «Արդարադատության» բառով:

2) Նույն հոդվածի 2-րդ մասում «Դատարանի» բառը փոխարինել «Արդարադատության» բառով:

3) Նույն հոդվածի 2-րդ մասում «անձանց վիրավորելով» բառերից հետո ավելացնել «պայմանավորված իրենց դատավարական կարգավիճակով» բառերը:

Հոդված 3.

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 332.3-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում միայն պաշտոնատար անձի կողմից փաստաբանի կամ նոտարի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար: Այսինքն, վերը նշված նորմով օբյեկտիվ կողմի նախատեսված գործողության կատարման համար անձն ենթակա է պատասխանատվության, եթե նա հանդիսանում է հատուկ սուբյեկտ՝ պաշտոնատար անձ: «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով առաջարկվում է՝ Հայաստանաի Հանրապետության քրեական օրենսգրքի 332.3-րդ հոդվածով 1-ին մասով նախատեսված հատուկ սուբյեկտը վերացնել, պայմանավորված է այն ողջամիտ հանգամանքով, որ նորմի դիսպոզիցիայում նկարագրված արարքի կատարումը պաշտոնատար անձ չհանդիսացող անձի կողմից ևս հնարավոր է և իրենից ներկայացնում է ոչ պակաս հանրային վտանգավորություն: Վերոնշյալ արարքի որակման համար նախատեսելով հատուկ սուբյեկտի առկայությունը, չի ապահովվում փաստաբանական գործունեության ողջամիտ պաշտպանվածությունը, որի ապահովումն էլ բխում է արդարադատության շահերից: Մեզանում իրավական պահանջ է դառնում փաստաբանի և նոտարի գործունեությանը խոչընդոտելու արարքի քրեականացումը՝ անկախ այն հանգամանքից՝ արարքը կատարվել է պաշտոնատար անձ հանդիսացող սուբյեկտի կողմից, թե այլ անձի: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ վերը նշված հոդվածով նկարագրված գործողություններից որևէ այլ պատասխանատվություն, այդ թվում քացաքացիական կամ վարչական օրենսդրությունը չի նախատեսել:

Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Օրենսգրքի 332.3 հոդվածի 1-ին մասում որպես օբյեկտիվ կողմ սահմանվել է փաստաբանի և նոտարի լիազորությունների խոչընդոտելը, մինչդեռ «Նոտարիատի մասին» և «Փաստաբանության մասին» Հայաստանաի Հանրապետության օրենքներում օրենսդիրը օգտագործում է «գործունեություն» սահմանում, հետևաբար առաջարկում եմ համապատասխանեցնել Օրենսգիրքի և վերը նշված երկու օրենքներում օգտագործվող սահմանումները՝ «լիազորություններ» բառը փոխարինել «գործունեություններ» բառով:

Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասով առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության քրեական օրեսգրքի 332.3 հոդված 1-ն մասով նախատեսված արարքի հանրային վտանգավորությամբ: Օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վերը նշված հոդվածը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին, քանի որ Օրենսգրքով նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ: Նախագծով

առաջարկվում է սանցիան փոփոխել և նախատեսել՝ ազատազրկման ձևով պատիժ մեկից մինչև մինչև երեք տարի ժամկետով, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն արարքը կդասվի միջին ծանրության հանցագործությունների շարքին:
Օրենսգրքի 31-րդ գլուխը պատասխանատվություն է նախատեսում արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների համար: Օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասի հանցակազմի անմիջական օբյեկտ է հանդիսանում դատարանի հեղինակությունը: Վերը նշված հոդվածով անձն ենթակա է պատասխանատվության, եթե վիրավորել է դատավարության մասնակցին, սակայն այն կատարել է դատարանի դահլիճում, ընդորում, եթե գործը քննվում է դատարանում: Եթե անձը նույն արարքը կատարել է մինչդատական վարույթում, օրինակ՝ քննիչի մոտ հարցաքննության ժամանակ կամ խափանման միջոց կալանքի միջնորդության քննության ժամանակ, ապա այդ անձը կարող է ենթարկվել քաղաքացիական պատասխանատվության, եթե նա դա անի հրապարակային և իր դեմ հայց ներկայացնի դատավարության մասնակիցը: Վերջին ժամանակներում դատավարության մասնակիցներից փաստաբանները հաճախակի ենթարկվում են վիրավորանքների դատարանի դահլիճից դուրս: Ինքնին երևույթը, որ դատական նիստի ժամանակ վիրավորանքը նույն անձին քրեորեն պատժելի է, իսկ դատական նիստի ավարտից հետո՝ ոչ, առնվազն անհասկանալի է: Մյուս կողմից վիրավորանքի քրեականացումը, այսինքն՝ վերադարձը նախկին կարգավորման, նույնպես արդարացված չէ: Դիտարկելով դատավարության մասնակցին որպես արդարադատություն իրականացնող սուբյեկտի առաջարկում ենք անմիջական օբյեկտը՝ «դատական իշխանության հեղինակությունը» փոխարինել «արդարադատության նկատմամբ ոտնձգությամբ», սակայն ամրագրելով, որ անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե անձը դատավարության մասնակցին վիրավորել է՝ ելնելով դատավարական կարգավիճակից: Այսինքն, եթե անձը հանդիսանում է որևէ գործով դատավարության մասնակից, սակայն այդ պահին այդ գործի առնչությամբ չի հայտնվել այդ վայրում, ապա այդ անձին հասցրած վիրավորանքը չի կարող համարվել քրեորեն պատժելի արարք: Քրեական պատասխանատվության համար անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայությունը, որ անձը հանդիսանա դատավարության մասնակից և նրա գտնվելու վայրը պայմանավորված լինի տվյալ գործի առնչությամբ: Այս երկու պայմաններից գոնե մեկի բացակայությունը կբացառի հանցակազմի առկայությունը: Այս փոփոխությամբ կկանխարգելենք դատավարության մասնակիցների նկատմամբ անհարգի ոտնձգությունը և կբարձրացնենք արդարադատության իրականացման բոլոր սուբյեկտների հեղինակության պաշտպանվածության մակարդակը, բացառելով վիրավորանքի քրեականացումը: